

Կոտայքի մարզպետն այցելել է Չարենցավանի բժշկական կենտրոն

Մարզպետ Ահարոն Սահակյանը մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պատասխանատուների հետ աշխատանքային այցով Չարենցավանի բժշկական կենտրոնում էր:

Բժշկական կենտրոնի տնօրեն Գառնիկ Սահակյանի ուղեկցությամբ Ահարոն Սահակյանը շրջայց է կատարել հաստատության տարածքում, ծանոթացել իրականացվող աշխատանքների ծավալին՝ մատուցվող ծառայություններին, սարքավորումների, ինչպես նաև մասնագետների հագեցվածությանը: Տնօրենի, բուժաշխատողների հետ քննարկվել են նաև խնդիրներն ու ծրագրերը:

Մարզի ղեկավարն առողջապահության համակարգում մասնագիտական բազմամյա և անբասիր աշխատանքի, ունեցած գնահատելի հաջողությունների, նաև ներդրած մեծ ավանդի համար բուժկենտրոնի վիրաբուժական բաժնի պետ Վանյա Պողոսյանին և բժիշկ-վարակաբան Արշալույս Բադայանին պարգևատրել է պատվոգրերով, իսկ բուժքույր Զոյա Մուսինյանին՝ շնորհակալագրով:

Բժշկական կենտրոնին է փոխանցվել նաև ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի և Կոտայքի մարզպետարանի համագործակցության արդյունքում տրամադրված բժշկական սարքավորումներ՝ շարժական սոնոգրաֆիայի ապարատ, հասակաշափ-կշեռք, պուլսոքսիմետր, շաքարի չափիչ: